

Հակահայկական քարոզչության ներկա փուլը, մարտահրավերներն ու դիմագրավման հնարավորությունները

Բարև ձեզ,

Հատկապես սփյուռքահայ մեր հայրենակիցներին բարի գալուստ եմ մաղթում Հայրենիք:

Հույս ունեմ, որ այս օրերին Հայրենիքում գտնվելը փոխադարձաբար օգտակար կլինի մեզ համար՝ փորձի փոխանակման, նաև միմյանց ճանաչելու առումով:

Ես պատրաստի ելույթ չունեմ, և պարզապես կներկայացնեմ կարճ թեզեր:

Հակահայկական քարոզչության առումով ես կառանձնացնեի երեք հարթություն. բովանդակային, ինստիտուցիոնալ և տեխնոլոգիական:

Բովանդակության մասով պարզ է. վերջին 100 տարիների ընթացքում սփյուռքում մեր հայրենակիցները ևս բախվել են բովանդակության հետ կապված խնդիրներին: Առաջին հերթին՝ Թուրքիայի կողմից տարածվող ապատեղեկատվությանը, պատմության մասին կեղծ պատկերացումների տարածմանը:

Բայց անկախության շրջանում՝ Հայաստանի Հանրապետության գոյության օրոք, Արցախյան պատերազմից հետո, այս հարցում շատ ագրեսիվ վարք է դրսևորում հատկապես մեր արևելյան հարևանը՝ Ադրբեջանը:

Եվ եթե մենք ուշադրություն դարձնենք ներկայումս Հայաստանի և հայության դեմ տարվող հակաքարոզչությանը, անպայման պետք է նկատենք, որ այդ գործում առաջամարտիկն այլևս Ադրբեջանն է: Այդ երկիրը հսկայական ֆինանսական և այլ ռեսուրսներ է ծախսում այս նպատակների իրականացման համար:

Եթե ամփոփեմ, ապա պետք է նշեմ, որ հակահայկական բովանդակության գեներացման հարցում, առաջին հերթին՝ կապված Հայոց ցեղասպանության ճանաչման, Արցախի հիմնախնդրի հետ, մեծ ակտիվություն են ցուցաբերում թե արևելյան, թե արևմտյան հարևանները: Շատ դեպքերում նրանք նույնիսկ գործում են համատեղ:

Թուրքիան և Ադրբեջանը հետևողականորեն աշխատում են կեղծ տեղեկություն տարածել Հայաստանի, հայության և հայկական սփյուռքի մասին: Բայց տեղեկությունը ստեղծելը, տարածելը մեկ բան է, այն թիրախային լսարանին հասցնելը մեկ այլ բան: Այստեղ մենք ունենք շատ լուրջ խնդիրներ՝ ինչպես Հայաստանում, այնպես էլ Սփյուռքում: Սփյուռքում միանգամից կցանկանայի արձանագրել, որ իմ տպավորությամբ, իմ շփումները, իմ փորձը բերել են այն եզրահանգման, որ Սփյուռքում քիչ են կարևորում Ադրբեջանի գործոնը, գուցե և պատմական իներցիայով կարևորելով

Թուրքիայի ֆակտորը: Բայց ներկայումս, կրկնում եմ և Արևմտյան Եվրոպայում, և ԱՄՆ-ում բավականին ակտիվ աշխատանքներ են տանում հենց ադրբեջանական կամ Ադրբեջանի կողմից ֆինանսավորվող ցանցերը:

Ցանցեր բառի վրա միանգամից տեղին է անցնել հակահայկական քարոզչության երկրորդ չափմանը՝ ինստիտուցիոնալ հարթությանը: Խնդիրը՝ հասկանալ, թե ինչ մեխանիզմներով է դա իրականացվում: Մենք Հայաստանում գիտենք այս մասին, խոսում ենք, կցանկանայի մեր սփյուռքահայ հայրենակիցների ուշադրությունը ևս հրավիրել այս հանգամանքի վրա:

Ներկայումս և՛ Ադրբեջանը, և՛ Թուրքիան իրենց հակահայ գործունեությունը ծավալելու համար հիմնականում հիմնվում են տեղական ռեսուրսների վրա՝ դրանք կլինեն քաղաքացիական հասարակության սուբյեկտները, դրանք կլինեն կրթօջախները, լրատվամիջոցները, նույնիսկ սպորտում և քաղաքական դաշտում գործունեություն իրականացնող անձինք և կազմակերպությունները: Եթե ուշադրություն դարձնեք, կտեսնեք, որ հսկայական ցանցեր են ստեղծվում, ֆինանսավորվում, որոնք աշխատում են հայության դեմ:

Մենք նաև որոշակի հետազոտություններ ունենք, թե պայմանականորեն անվանակոչված «խավիարային դիվանագիտություն» տեխնոլոգիայով ինչպես է կազմակերպվում լոբբիստական, քարոզչական աշխատանքը և՛ Հայաստանի, և՛ հայության դեմ: Ըստ որում՝ դրանցում ներգրավվում են հիմնականում տեղի, տվյալ երկրներում գործող կառույցների, տվյալ հասարակությունների ներուժը:

Հասկանալի է, որ դրան հակազդելու համար մենք պետք է ունենանք մեր ցանցը, և ի տարբերություն Ադրբեջանի կամ Թուրքիայի, մեր ցանցն ի սկզբանե ունի առավելություն. այն գաղափարական է, խարսխված է աշխարհասփյուռ հայության ներուժի վրա: Բոլորս մեկտեղված ենք մեր արյամբ, մեր ոգով, մենք բոլորս հայ ենք և նվիրված ենք այդ գործին: Այս առումով գուցե և կա որոշակի կազմակերպվածության խնդիր, ընդհանուր օրակարգ ձևավորելու խնդիր, միմյանց կարիքները հասկանալու խնդիր, որովհետև երբեմն նույնիսկ ամենաառաջադեմ հասարակություններում տեղի հայությունը խնդիրներ է ունենում ու չունի օժանդակությունը թե՛ Հայրենիքի և թե՛ հայ համայնքների, կամ այսօր հատկապես Արցախի հասարակությունը ունի Հայաստանի և աշխարհասփյուռ հայության օժանդակության կարիքը տեղեկատվական քարոզչության հարթության մեջ: Բայց նրանք, ովքեր ցանկանում են օգնել, երբեմն չգիտեն կարիքի մասին: Այսինքն այստեղ մենք ընդամենը ունենք միմյանց հետ երկխոսելու և միմյանց կարիքները հասկանալու խնդիր: Կա ցանցը, ընդամենը պետք է հասկանալ՝ ինչպես այն օգտագործել:

Եվ եզրափակելով պետք է անդրադառնամ երրորդ չափման, որը շատ կարևոր է՝ դա տեխնոլոգիական չափումն է: Ադրբեջանը և Թուրքիան իհարկե ավելի զարգացած տնտեսություն են և մենք պետք է օբյեկտիվորեն նայենք իրականությանը: Հսկայական միջոցներ են ներդնում տեխնիկական, տեխնոլոգիական համալրման դաշտում: Խոսքը միայն նյութականին չի վերաբերում, խոսքը վերաբերում է հասարակական պրոցեսներում ճիշտ ներգրավվելու, արդյունավետ ազդելու, աշխատելու մեխանիզմներին: Անցած տասնամյակում երևի թե 2 նոր տերմին կա, որոնք բավականին լայն տարածում են գտել և ներկայումս մեծ կարևորություն ունեն գանգվածային հաղորդակցության ոլորտում: Առաջինը՝ «կիբերպատերազմն» է, երկրորդը՝ «կեղծ նորությունը»՝ «fakenews»: Աշխարհում այսօր այլևս ոչ ոք զերծ չէ այս տերմինների ներքո ենթադրվող երևույթներից: Բնականաբար, դրանք այլևս վերաբերում են նաև Հայաստանին և նրա առջև ծառայած մարտահրավերներին:

Հասկանալի է, որ բավականին զորեղ հակառակորդների պարագայում լուրջ ռեսուրսների ներգրավման և ինտենսիվ գործունեության պայմաններում հսկայական աշխատանք է կատարվում Հայաստանի և հայության դեմ: Կա մոտեցում, որ ճշմարտությունը վաղ թե ուշ հաղթելու է, և ամեն ինչ կընկնի իր տեղը: Բայց պետք է հիշեցնեմ, որ օրինակ Եվրոպայից շուրջ 1000 տարի պահանջվեց, որպեսզի սխոլաստիկայի դարաշրջանի խավարից դուրս գա: Ասելիքս այն է, որ ժամանակն ամեն ինչ իր տեղը գուցեև դնի, բայց մենք սպասելու ժամանակ չունենք և ճշմարտությունն աշխարհին հասցնելու համար պետք է գործենք հենց այսօր:

Ամփոփելով՝ ընդամենն արտահայտում եմ ցանկությունս է, որպեսզի համատեղ ուժերով ճիշտ գնահատենք մեր առջև ծառայած մարտահրավերները, ռիսկերը, և կարողանանք նաև ճիշտ գնահատել այն դեղահաբերը, որ կարող ենք օգտագործել մեր հասարակությանը, մեր պետությանը, մեր ժողովրդին, աշխարհասփյուռ հայությանը, զերծ պահել հակահայ քարոզչության վտանգներից, նաև կանխենք ու դիմագրավենք հայության, Հայաստանի ու Արցախի մասին շինծու, նեգատիվ տեղեկության տարածմանը:

Մենք պետք է հասկանանք, որ սա մեր խնդիրն է և գործենք միասնաբար:

Շնորհակալություն: